

ՏԵՂԵԿԱՆՔ

2017 թվականի հոկտեմբերի 24-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) մասնակցությամբ դատական գործերի վերաբերյալ

Խորհուրդը 2017 թվականի հոկտեմբերի 24-ի դրությամբ քաղաքացիական ծառայության հարցերով ներգրավվել է 8 դատական գործընթացում, որից 4-ը գտնվում է ընթացքի մեջ: Մասնավորապես՝

1. ՀՀ վարչական դատարանում Խորհուրդը որպես պատասխանող ներգրավվել է ըստ հայցի Գայանե Շալունցի ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության, Խորհրդի, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարության՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի ղեկավարի 23.09.2014 թվականի N 46-ԱԿ-1 հրամանը՝ «Գայանե Շալունցի նկատմամբ «Զբաղեցրած պաշտոնից ազատում» կարգապահական տույժ կիրառելու մասին» և 03.10.2014 թվականի N 168-ԱԿ հրամանը՝ Գայանե Շալունցի նկատմամբ «Զբաղեցրած պաշտոնից ազատում» կարգապահական տույժ կիրառելու մասին և 03.10.2014 թվականի N 167/1-ԱԿ հրամանը՝ Գայանե Շալունցին Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճանից զրկելու մասին վերացնելու (անվավեր ճանաչելու), Գայանե Շալունցի խախտված իրավունքը վերականգնելու, այն է՝ Գայանե Շալունցին իր նախկին աշխատանքին (զբաղեցրած պաշտոնին) վերականգնելու, ինչպես նաև հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար գործատուից նրա միջին աշխատավարձը գանձելու, նշված բողոքարկումների շրջանակներում Գայանե Շալունցի նկատմամբ «Զբաղեցրած պաշտոնից ազատում» կարգապահական տույժը կիրառելուն համաձայնություն տալու մասին Խորհրդի 19.09.2014 թվականի թիվ 876-Ա որոշումը վերացնելու պահանջների մասին» թիվ ՎԴ/6966/05/16 վարչական գործով:

ՀՀ վարչական դատարանը 20.09.2017 թվականի վճռով հայցը բավարարել է:

Խորհուրդը 20.10.2017 թվականին ՀՀ վարչական դատարանի՝ 20.09.2017 թվականի թիվ ՎԴ/6966/05/16 վարչական գործով կայացրած վճռի դեմ /նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքերով/ վարչական վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ վարչական վերաքննիչ դատարան:

2. ՀՀ վարչական դատարանում Խորհուրդը որպես երրորդ անձ ներգրավվել է ըստ հայցի Դավիթ Թադևոսյանի, Անդրանիկ Գուլբանյանի, Սամվել Առաքելյանի ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության պետական տեսչության, երրորդ անձինք ՀՀ ֆինանսների նախարարության, Խորհրդի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ղեկավարի 01.03.2012 թվականի թիվ 198-Ա հրամանը՝ համահայցվորներին զբաղեցրած պաշտոններից ազատելու մասով անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ պատասխանողներին ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության պետական տեսչության պաշտոններում կատարված նշանակումները վերանայելուն և «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով սահմանված կարգով՝ նախապատվության կարգով իրենց համապատասխան պաշտոնների նշանակելուն պարտավորեցնելու, և պատասխանողից հոգուտ համահայցվորների հարկադիր պարապուրդի ամբողջ գումարը՝ սկսած 01.09.2012 թվականից բռնագանձելու պահանջի մասին թիվ ԵԿԴ/0187/02/14 վարչական գործով:

Սույն դատական գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ին ՀՀ վարչական դատարանը որոշում է կայացրել գործի վարույթը աշխատանքի վերականգնման մասով կարճելու:

2016 թվականի հունվարի 15-ին հրապարակած վճռով՝ հայցն ամբողջությամբ մերժվել է:

Դավիթ Թադևոսյանը, Անդրանիկ Գուլբանյանը և Սամվել Առաքելյանը վերաքննիչ բողոք են բերել ՀՀ վարչական վերաքննիչ դատարան:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 2016 թվականի հոկտեմբերի 7-ի հրապարակած որոշմամբ՝ վերաքննիչ բողոքը N ԵԿԴ/0187/02/14 վարչական գործով բավարարվել է և ՀՀ վարչական դատարանի 2016 թվականի հունվարի 15-ի վճիռն ամբողջովին բեկանվել է և հայցը բավարարվել է:

Սույն դատական գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը՝ միջնորդելով հարգելի ճանաչել վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը և վերականգնել այն, միաժամանակ պահանջել է բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 2016 թվականի հոկտեմբերի 7-ի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 2016 թվականի հունվարի 15-ի վճիռին:

ՀՀ Վճռաբեկ դատարանի 2017 թվականի մարտի 15-ի որոշմամբ՝ N ԵԿԴ/0187/02/14 վարչական գործով վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության, իսկ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության վճռաբեկ բողոքը մերժվել:

3. ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում Խորհուրդը ներգրավվել է ըստ հայցի Ֆեոդոր Սարգսի Պետիկյանի ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության, երրորդ անձ Խորհրդի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի ղեկավարի 2015 թվականի նոյեմբերի 25-ի N ՇՇ/252196-15 հրամանն անվավեր ճանաչելու և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի ղեկավարին՝ Ֆեոդոր Սարգսի Պետիկյանին քաղաքացիական ծառայության պաշտոնում վերականգնելուն պարտավորեցնելու պահանջների մասին N ԵԿԴ/5855/02/15 քաղաքացիական գործով:

ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի ապրիլի

13-ին որոշմամբ՝ N ԵԿԴ/5855/02/15 քաղաքացիական գործով Ֆետոոր Պետիկյանի հայցը մերժվել է:

Սույն գործով Ֆետոոր Պետիկյանը վերաքննիչ բողոք է բերել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2017 թվականի ապրիլի 13-ի Հա.ԵԿԴ/5855/02/15 քաղաքացիական գործով կայացրած վճռի դեմ:

Գործի քննությունը նշանակվել է 2017 թվականի նոյեմբերի 1-ին, ժամը 12:05-ին ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի շենքում:

4. ՀՀ վարչական դատարանում Խորհուրդը որպես պատասխանող ներգրավվել է ըստ հայցի Լյովա Սեյրանի Քառյանի ընդդեմ Խորհրդի, ՀՀ բնապահպանության նախարարության՝ Խորհրդի 24.01.2008 թվականի N 61-Ա որոշումը, դրա հիման վրա ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի 30.01.2008 թվականի N 56-Ա հրամանն անվավեր ճանաչելու և նախկին պաշտոնում վերականգնելու պահանջի մասին N ՎԴ/3004/05/08 վարչական գործով:

ՀՀ վարչական դատարանի 27.01.2009 թվականի N ՎԴ/3004/05/08 որոշմամբ՝ սույն վարչական գործի վարույթը կասեցվել է՝ մինչև հայցվոր Լյովա Քառյանի կողմից կեղծ դիպլոմ օգտագործելու և դրա օգնությամբ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Լոռու տարածքային բաժնի պետի տեղակալի պաշտոնում նշանակվելու դեպքի առթիվ 04.04.2008 թվականին ՀՀ Լոռու մարզի քննչական բաժնում հարուցված քրեական գործի դատական քննության ավարտը:

ՀՀ վարչական դատարանի 05.09.2016 թվականի «Գործի վարույթը վերսկսելու մասին» որոշմամբ վերսկսվել է վերոհիշյալ գործով 27.01.2009 թվականին կասեցված N ՎԴ/3004/05/08 վարչական գործը:

2017 թվականի փետրվարի 7-ին, ժամը 12:30-ին սույն գործով նշանակված դատաքննությունն ավարտվել է:

ՀՀ վարչական դատարանի 2017 թվականի փետրվարի 28-ի կայացրած վճռով՝
Լյովա Քառյանի հայցը մերժվել է:

5. ՀՀ վարչական դատարանում Խորհուրդը որպես երրորդ անձ ներգրավվել է ըստ հայցի Հարություն Կարապետյանի ընդդեմ «ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի՝ 12.11.2014 թվականի N 866-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին N ՎԴ/1950/05/16 վարչական գործով: Վերոհիշյալ գործով 2017 թվականի փետրվարի 17-ին, ժամը 14:30-ին նշանակված դատաքննությունն ավարտվել է և վճռի հրապարակման օր էր նշանակվել 2017 թվականի մարտի 9-ին ժամը 17:00-ին:

ՀՀ վարչական դատարանի 2017 թվականի մարտի 9-ի «Ապացույց պահանջելու մասին» ՀՀ վարչական դատարանի 2017 թվականի մարտի 9-ի որոշման հիման վրա դատարանը՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկից պահանջել է՝ որոշումը ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետում ներկայացնել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության Վայոց Ձորի մարզային հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության աշխատակիցների պաշտոնի անձնագրերը:

ՀՀ վարչական դատարանի 2017 թվականի օգոստոսի 31-ի կայացրած վճռով՝
Հարություն Կարապետյանի հայցն ամբողջությամբ մերժվել է:

6. ՀՀ վարչական դատարանում Խորհուրդը որպես երրորդ անձ ներգրավվել է ըստ հայցի Սամվել Հովսեփյանի ներկայացուցիչ՝ Մարատ Գինոսյանի ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության, երրորդ անձ՝ Խորհրդի՝ ՀՀ բնապահպանության նախարարությանը Սամվել Հովսեփյանի պաշտոնավարման ժամկետը երկարաձգելու մասին ներկայացված միջնորդությունը քննության առնելուն պարտավորեցնելու պահանջների մասին N ՎԴ/5853/05/16 վարչական գործով:

ՀՀ վարչական դատարանի 2017 թվականի փետրվարի 7-ի «Վարչական գործի վարույթը մասով կարճելու վերաբերյալ» որոշման հիման վրա՝ N ՎԴ/5853/05/16

վարչական գործով երրորդ անձ Խորհուրդը հանվել է դատավարության մասնակիցների կազմից: Իսկ ՀՀ վարչական դատարանի 2017 թվականի հունիսի 27-ի «Վրիպակն ուղղելու վերաբերյալ» որոշման հիման վրա՝ N ՎԴ/5853/05/16 վարչական գործի վարույթն ըստ հայցի Սամվել Հովսեփյանի ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության՝ Խորհրդին պաշտոնավարման ժամկետը երկարաձգելու մասին ներկայացված միջնորդությունը քննության առնելուն պարտավորեցնելու պահանջի մասով կարճվել է:

7. ՀՀ վարչական դատարանում Խորհուրդը որպես պատասխանող ներգրավվել է ըստ հայցի Գոռ Անդրիասյանի ընդդեմ Խորհրդի՝ ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 11.04.2017 թվականի N 1 որոշումը, որպես հետևանք՝ 11.04.2017 թվականին կայացած ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի արդյունքներն անվավեր ճանաչելու, նշված մրցույթը կրկին անցկացնելու պահանջի մասին» N ՎԴ/4180/05/17 վարչական գործով:

ՀՀ վարչական դատարանը 2017 թվականի հոկտեմբերի 4-ի որոշմամբ սույն վարչական գործով երրորդ անձ է ներգրավվել ՀՀ առողջապահության նախարարությանը:

Սույն գործով նախնական դատական նիստը նշանակված է 2018 թվականի մարտի 19-ին ժամը 10:30-ին:

8. ՀՀ վարչական դատարանում Խորհուրդը որպես պատասխանող ներգրավվել է ըստ հայցի Արմինե Մարտիրոսյանի ընդդեմ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի և Խորհրդի՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի ղեկավարի 31.10.2016 թ. թիվ 1024-Ա հրամանն անվավեր ճանաչելու մասին և որպես հետևանք՝ նախկին աշխատանքում վերականգնելու և պարապուրդի ողջ ժամանակահատվածի համար

աշխատավարձը վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասին» թիվ ՎԴ/4723/05/17 վարչական գործով:

Սույն գործով նախնական դատական նիստը նշանակված է 2017 թվականի նոյեմբերի 23-ին ժամը 14:00-ին: